600.0107.29.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2017 թվականի №107Ա
քաղ. Երևան

«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի մարտի 17-ի №MH/L170345/1.0/RY գրությունը (հանձնաժողովում մուտքագրվել է 2017 թվականի մարտի 20-ին)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Երևան քաղաքում, Արագածոտնի և Արմավիրի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրել 14767-15187ՄՀց, 22330-23338ՄՀց, 22358-23366ՄՀց, 22386-23394ՄՀց, 22414-23422ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքում, Արագածոտնի և Արմավիրի մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրվող 14767-15187ՄՀց, 22330-23338ՄՀց, 22358-23366ՄՀց, 22386-23394ՄՀց, 22414-23422ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում 900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆ

ք. Երևան
29 մարտի 2017 թ.
ժամը 16[00]